Արձանագրություն N 3
ՀՀՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-24/1 ծածկագրով բաց մրցույթի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

08 փետրվարի 2024թ.
ժամը 12:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Լ. Նալբանդյանը
անդամներ՝ Ռ. Կուսիկյանը, Լ. Սահակյանը, Ա. Ավետիսյանը, Մ. Պատուրյանը,
քարտուղար՝ Ա. Սաստրյանը

**I. Հայտերի բացման մասին**

(Լ. Նալբանդյան)

1. Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի տվյալները |
|---|---|---|
| 1 | «Էդեսսա» ՍՊԸ | ք. Երևան, Փարպեցի 13, Gevorg.harutyunyan@edessa.am, հեռ. 010 53 12 40 |

| Չ/Հ | «Էդեսսա» ՍՊԸ | Պլանավորված առավելագույն գինը |
|---|---|---|
| | Գնային առաջարկ առանց ԱԱՀ | |
| 1 | **25 000 000** | **30 000 000** |

2. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀՊԵԿ-ԲՄԽԾՁԲ-24/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, առկա են հետևյալ անհամապատասխանությունները.
ա/ Բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովումը սկանավորված է սև և սպիտակ տարբերակով, հնարավոր չէ հասկանալ բնօրինակից արտատպված տարբերակ է, թե ոչ (անհրաժեշտ է ներկայացնել գունավոր սկան):
բ/ Հրավերով պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները թերի են ներկայացված: Մասնավորապես՝ բացակայում են աշխատակիցների աշխատանքային փորձը հավաստող (հիմնավորող) փաստաթղթերի (աշխատանքային գրքույկ, աշխատանքային գրքույկի թվայնացված տարբերակ, անհատական հաշվի քաղվածք կամ գործատուի կողմից տրվող համապատասխան տեղեկանք և այլն) պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին**

(Լ. Նալբանդյան)

3. Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Էդեսսա» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ ______________ Լ. Նալբանդյան

| | | |
|---|---|---|
| անդամներ՝ | ........................................ | Ռ. Կուսիկյան |
| | ........................................ | Լ. Սահակյան |
| | ........................................ | Ա. Ավետիսյան |
| | ........................................ | Ս. Պատուրյան |
| քարտուղար՝ | ........................................ | Ա. Սաատրյան |